Grant Thornton

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. +374 10 260 964
Ֆ. +374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia

T +374 10 260 964
F +374 10 260 961

www.gta.am

«Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ-ի մասնակիցներին և խորհրդին,

Մենք ստուգել ենք «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ «Բանկ») կից ներկայացվող համառոտ ֆինանսական հաշվետվությունների (որոնք ներառում են 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համառոտ հաշվետվությունը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համառոտ հաշվետվությունները) համապատասխանությունը Բանկի՝ 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ամբողջական ֆինանսական հաշվետվությունների հետ՝ համաձայն Աուդիտի միջազգային ստանդարտների:

Բանկի ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Մեր պատասխանատվությունն է ստուգել սույն համառոտ ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունը վերոհիշյալ ամբողջական ֆինանսական հաշվետվությունների հետ:

Ի հավելումն, մենք աուդիտի ենք ենթարկել Բանկի 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ամբողջական ֆինանսական հաշվետվությունները՝ պատրաստված համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, և 2011թ. փետրվարի 4 ամսաթվով թվագրված մեր եզրակացությունում մենք ներկայացրել ենք դրական եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մեր կարծիքով, կից ներկայացվող համառոտ ֆինանսական հաշվետվությունները ճշգրտորեն են ստացվել Բանկի ամբողջական ֆինանսական հաշվետվություններից:

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների, ինչպես նաև աուդիտի շրջանակների վերաբերյալ ավելի լավ պատկերացում կազմելու համար համառոտ ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկել դրանց ստացման համար հիմք հանդիսացող ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացության հետ համատեղ:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն/բաժնետեր

Արեն Աղաջանյան
Աուդիտի ղեկավար

04 փետրվարի, 2011թ.

ք. Երևան